



## Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հրավիրվում է համապատասխան փորձառություն ունեցող ընկերություններին ներկայացնել հետաքրքրության հայտեր ներքոհիշյալ ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրված մրցույթին մասնակցելու համար՝

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ջրամատակարարման համակարգում առկա էլեկտրական և մեխանիկական սարքավորումների, ինչպես նաև կապակցված համակարգերի մոնտաժում, տեղայնացում, կենտրոնավորում, գործարկում, ապարատային և ծրագրային սպասարկում, ծրագրավորում, վերանորոգում, պրոֆիլակտիկ սպասարկում և արդիականացում:

### Սարքավորումների հակիրճ նկարագիր

Էլեկտրամագնիսական հոսքաչափեր և ուլտրաձայնային մակարդակաչափեր, ինչպես նաև տարատեսակ չափող, տվյալները գրանցող և հաղորդող սարքավորումներ, թվային տվիչներ և ցուցիչներ, խորքային, հորիզոնական և ուղղահայաց պոմպեր, ներկառուցված ինվերտորային պոմպեր, ամբողջական պոմպակայաններ, նախատեսված բակային, թաղամասային և համայնքային նշանակության համար, սինխրոն և ասինխրոն շարժիչներ հզորությունները սկսած 0,5կՎտ-ից մինչև 2500կՎտ, փականներ՝ դարպասային, թիթեոնիկ, գնդիկավոր, հետադարձ, շարժաբերով և մեխանիկական, տրամագիծը սկսած 10մմ-ից մինչև 1200մմ, ֆիլտրեր և օդահաններ, ճնշման կարգավորիչ փականներ՝ վերև կամ ներքև կարգավորող, գիշեր-ցերեկ ռեժիմներով, տարատեսակ մալուխային տնտեսություն սկսած 12վ-ից մինչև 10000վ, տարատեսակ էլեկտրական վահանակներ ներառյալ պաշտպանություն, հասարակ և գերժամանակակից ավտոմատիկա, վահանակներ ներկառուցված էկրաններով, ինվերտորային և փափուկ թողարկի համակարգերով, բարձր և ցածր լարման տնտեսություն ներառյալ ենթակայաններ և յուղային տրանսֆորմատորներ, տելֆերներ, հենասյուներ, բարձրավոլտ հաղորդալարեր և շանթարգելներ:

### Շահագրգիռ ընկերությունները պետք է բավարարեն ներքոնշյալ պայմանները.

- Առնվազն մեկ նմանատիպ պայմանագրի իրականացման փորձառություն ողջ Հայաստանի տարածքով՝ վերջին 4 տարիների ընթացքում: Հայտատուն պետք է ներկայացնի համապատասխան պայմանագրերը, կատարված աշխատանքների բնութագրերը և ավարտական ակտերը, ինչպես նաև պավիրատուների կոնտակտային տվյալները:
- Նշված ծառայությունների իրականացման համար որակավորված անձնակազմ, առնվազն 35-40 աշխատակից՝ այդ թվում բարձրավոլտ (մինչև 10.000Վ) և ցածրավոլտ աշխատանքների իրականացման համար 7-8 էլեկտրիկ՝ IV և V էլ. անվտանգության որակավորմամբ, 25-30 մեխանիկ՝ II և III որակավորմամբ, ծրագրավորման մասնագետներ, աշխատանքի անվտանգության գծով ինժեներ, զոդող և այլն: Ընկերության հիմնական մասնագիտական աշխատակազմը պետք վերապատրաստված լինի արտասահմանյան հեղինակավոր ընկերությունների կողմից:
- Ընկերության նմանատիպ ծառայությունների մատուցման տարեկան շրջանառությունը պետք է լինի ոչ պակաս, քան 500մլն. ՀՀ դրամ:

- Ընկերությունը պետք է ունենա նշված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մեքենամեխանիզմներ՝ նվազագույնը 15-20 կիսաբեռնատար (պիկապ) և բեռնատար ավտոմեքենա, թափքը՝ ամենագնաց, գործիքների համար նախատեսված խցիկների առկայությամբ:
- Ընկերությունը պետք է ապահովված լինի հզոր ժամանակակից գործիքակազմով՝ այդ թվում լազերային կարգաբերման-կենտրոնավորման սարք, էլեկտրոնային ջերմային տեսախցիկ, վիբրացիան չափող էլեկտրոնային սարք, թվային ցուցիչներ, բարձրավոլտ սարքավորումների ստուգաչաման ժամանակակից գործիքակազմ, պոմպերի և շարժիչների արտասահմանյան ստուգաչափման ստենդ և խորքային ու վերգետնյա պոմպերի համար նախատեսված, բոլոր մեքենաներում պարտադիր գործիքների առկայությամբ,

Վերոնշյալ սարքավորումների սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասերի պահեստ: Հայտատուն պետք ներկայացնի նշված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պահեստամասերի և ապրանքների պահեստի մնացորդը 01. 01. 2018-ի դրությամբ:

Շահագրգիռ ընկերությունները պետք է տրամադրեն նշված ծառայություններն իրականացնելու համար համապատասխան որակավորման, ֆինանսական և տեխնիկական կարողությունների, աշխատակազմ ունենալու վերաբերյալ բավարար տեղեկատվություններ /ծանուցագրքեր, կատարված նմանատիպ աշխատանքների բնութագիր, նշված բնագավառի փորձի և համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմի վերաբերյալ տեղեկություններ, կենսագրական տվյալներ, վկայականները և արտոնագրերը, անձնակազմի վերապատրաստման մասին հավաստող տեղեկանքներ, ֆինանսական տվյալներ և այլն/:

Ծառայությունների սկիզբը նախատեսված է 2018թ. հունվարի 31-ից՝ երեք տարի ժամկետով: Լավագույն փորձառություն ունեցող ընկերությունը կհրավիրվի ներկայացնելու ֆինանսական առաջարկ:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ «Վեոլիա Ջուր» ընկերությունից աշխատանքային օրերին ժ.09:00–17:00 ներքոհիշյալ հասցեով:

Հետաքրքրության արտահայտման հայտը պետք է ներկայացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հասցեով կամ ներքոհիշյալ էլ. փոստով՝ մինչև 2018 թվականի հունվարի 16-ը:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ  
 ՀՀ, 0025, Երևան, Ադոնց 6/1  
 Հեռախոս՝ (374 11) 54-26-95, 077 244 222  
 Էլեկտրոնային փոստ՝ [procurement@vjur.am](mailto:procurement@vjur.am)